ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՓՈՒԼԸ

(ԽՍՀՄ պատմաբանների 1928 թ. դեկտեմբերի 28—1929 թ. հունվարի 4-ի գիտաժողովը)

Մ. Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Մարքս-լենինյան պատմահայեցողական հենքի վրա խորհրդային պատմագիտական մտքի ձևավորման պրոցեսում, որը սկիզբ առավ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակով, կարևորագույն շրջափուլ դարձավ մեր երկրի պատմաբանների բազմազգ բանակի համամիութենական առաջին գիտաժողովը։ Այն տեղի ունեցավ 1928 թ. դեկտեմբերի 28-ից—1929 թ. հունվարի 4-ը։ Խորհրդային գրեթե բոլոր հանրապետությունները ներկայացնող պատմաբանների այդ ծանրակշիռ գիտաժողովում որոշակի աշխատանք ծավալեց ԽՍՀՄ ժողովուրդների պատմության պրոբլեմներն ուսումնասիրող սեկցիան։ Դա պատմագիտական առումով լուրջ նվաճում էր, եթե նկատի ունենանք, որ նախահեղափոխական պատմագիտությունը, գերազանցապես ուսումնասիրելով ռուսաց պատմությունը, կա՞մ անտեսում ու թերագնահատում էր նրա տարածքում ապրող ժողովուրդների քաղաքական կացությունը, կա՞մ էլ լավագույն դեպքում դրան անդրադառնում էր սոսկ դիպվածաբար, թերևս միայն Ռուսաստանի պատմության առնչությամբ։ Գիտաժողովում ոչ միայն քննադատվեց նման միակողմանի մոտեցումը, այլև ռեալ քայլ կատարվեց ազգային հանրապետությունների ժողովուրդների պատմության լուսաբանման, տեղերում ազգային կադրեր, մարքսիստ-պատմաբաններ պատրաստելու, պատմագիտական միտքը գործնականում զարգացնելու ուղղությամբ։ Խորհրդային հանրապետությունների պատմության ուսումնասիրության անհրաժեշտությունն ու քաղաքական կարևորությունն ընդունելուց բացի գիտաժողովի մասնակիցներ Վ. Ապտեկարն ու Ա. Շեստակովը միանգամայն արդարացիորեն հանդես եկան նաև ազգային ծայրամաս հասկացության դեմ, գտնելով, որ նման մոտեցումը և գնահատականը չեն կարող ռեալ պայմաններ ստեղծել այնտեղ ապրող ժողովուրդների պատմությունը գիտական բարձր մակարդակով լուսաբանելու համար[1]։

Ս. Բիկովսկին իր հերթին անհրաժեշտ համարեց սկզբունքորեն նորովի ուսումնասիրել ոչ միայն ռուսաց հնագույն ժամանակաշրջանի տարեգրությունը, այլև ԽՍՀՄ ժողովուրդների պատմությունը։ Մեր երկրի բազմազգ ժողովուրդների պատմության լուսաբանման գիտական և քաղաքական կարևորության գիտակցումն ուսանելի էր ու հետաքրքիր նաև այն առումով, որ նման պարագայում ակնհայտ կդառնար Ռուսաստանի կազմի մեջ նրանց մտնելու կարևորությունը, ռուս ժողովրդի հետ ունեցած քաղաքական, տնտեսական, մշակութային հարաբերությունների և կապերի անաչառ ուսումնասիրության անհրաժեշտությունը։ Գիտաժողովում մեծ հետաքրքրությամբ լսվեցին ազգային հանրապետությունների՝ Միջին Ասիան և Անդրկովկասը ներկայացնող պատմաբանների ուշագրավ զեկուցումներն ու հաղորդումները, որոնց վերաբերյալ տեղի էին ունենում բազմակողմանի քննարկումներ և բանավեճեր։ Դրանց մասնակիցներն առանձնակի ուշադրությամբ ունկնդրեցին խորհրդահայ պատմաբան Հ. Զորյանի և վրաց պատմաբան Ֆ. Մախարաձեի

---

[1] Труды первой Всесоюзной конференции историков-марксистов, т. II, М., 1930, с. 355, 495, 541.

զեկուցումները, որոնք մյուսներից տարբերվում էին նրանով, որ համապատասխանաբար նվիրված էին հայոց պատմագիտությանը և Վրաստանի XIX դ. պատմությանը, մինչդեռ գիտաժողովում կարդացված զեկուցումների մեծ մասը վերաբերում էր XIX—XX դդ. սահմանագծի քաղաքական իրադարձություններին, հեղափոխական և բանվորական շարժումների պատմությանը, այսինքն այն պրոբլեմներին, որոնք անմիջականորեն նախորդել են Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությանը։ Հ. Զորյանն իր զեկուցման մեջ մեծ տեղ հատկացրեց հայկական առևտրական կապիտալին, որն այլևայլ հանգամանքների բերումով և գերազանցապես վերին աստիճանի քաղաքական անբարենպաստ պայմանների պատճառով ամուր արմատներ գցեց ոչ թե դարեր շարունակ օտար լծի տակ գտնված մայր երկրում, այլ հայրենիքից դուրս։ Հայկական առևտրական կապիտալը զրկված լինելով հայրենիքում ծավալվելու հնարավորությունից, ամուր և առանցքային դիրքեր գրավեց Հնդկաստանի Մադրաս և Բոմբեյ, Ռուսաստանի՝ Մոսկվա, Թիֆլիս, Բաքու, Աստրախան, Պարսկաստանի՝ Նոր-Ջուղա, Թուրքիայի՝ Կ. Պոլիս, Զմյուռնիա և Տրապիզոն, Արևմուտքի և Մերձավոր արևելքի մի շարք քաղաքներում[2]։

Հ. Զորյանի տեսակետից առևտրական կապիտալի կրող հայկական բուրժուազիան հալածվում ու հետապնդվում էր այդ երկրների ազգային բուրժուազիայի կողմից, որի համար էլ նա «փնտրում էր սեփական հայրենիք՝ սեփական պետականությամբ»[3]։ Այս միտքը հիմնավորելու համար զեկուցողը նշեց, որ դեռևս «18-րդ դ. կեսին Հնդկաստանի հայ վաճառականների կողմից տրվեց ազդանշան այդ գաղափարը իրագործելու համար»[4]։ Հայկական բուրժուազիային, ասաց զեկուցողը, պարզ էր, որ ինքը միայն իր սեփական ուժերով ի վիճակի չէ իրագործելու այդ գաղափարը։ Նա գիտակցում էր, որ դրա համար անհրաժեշտ է կրոնական ու դասակարգային տարբերություններից անկախ շարժման մեջ դնել ամբողջ ազգը։ Բայց, ցավոք, խորհրդահայ պատմաբանն այդքանով էլ բավարարվեց, անպատասխան թողնելով հայ ազատագրական շարժման հետագա ընթացքը և վախճանը, հանրագումարն ու արդյունքները։ Ահա ինչու նա չանդրադարձավ Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման նշանակությանը և, բնականաբար, չներկայացրեց իր տեսակետը, քանզի խորհրդային պատմագիտության մեջ դեռ չէր իմաստավորվել հայ ժողովրդի համար այդ երևույթի դրական նշանակությունը։ Խորհրդային պատմաբանները փաստորեն դեռ չէին յուրացրել Վ. Ի. Լենինի երկու՝ ցարական-պաշտոնական և առաջադիմական-հեղափոխական Ռուսաստանի վերաբերյալ չափազանց կարևոր ու արժեքավոր գնահատականը։ Խորհրդային պատմագիտությունը, թերևս, տեսնում էր միայն ցարական Ռուսաստանը և այդ հարցում կարծես մոռացության մատնում դեմոկրատական Ռուսաստանը, չնկատելով, որ այդ ժողովուրդները ոչ միայն նվաճվում էին ցարիզմի կողմից, այլև օբյեկտիվորեն հարաբերությունների մեջ էին մտնում դեմոկրատական շրջանների հետ, իրենց քաղաքական, սոցիալական, ազգային ազատագրման հեռամետ նպատակները սերտորեն շաղկապում հենց ռուս ժողովրդի հեղափոխական պայքարի հետ։

Այդ իրողությունը գիտաժողովում հստակորեն դրսևորվեց Վրաստանի պատմության օրինակով, կապված Ֆ. Մախարաձեի զեկուցման և դրա շուրջ ծավալված բանավեճի հետ, որին մասնակցեցին նաև Մ. Պոկրովսկին ու հայ պատմաբանները։ Ֆ. Մախարաձեի զեկուցումը հետաքրքիր էր Վրաստանը Ռուսաստանին միանալու գնահատականի տեսանկյունից։ Այն ևս, չնայած կրում էր ժամանակի քաղաքական կոնյունկտուրայի կնիքը, հիշարժան էր և ուսանելի, որովհետև պատմական այդ նշանակալի իրադարձության մեջ հեղինակը տեսնում էր նաև դրական կողմեր։ Ինչպես նշվեց, Ֆ. Մախարաձեի զե-

---

2 Նույն տեղում, հ. 1, Մ., 1930, էջ 469—470։

3 Նույն տեղում, էջ 470։

4 Նույն տեղում։

կուցումը նվիրված էր XIX դ. Վրաստանի պատմությանը։ Թեմայի նման ընտրությունը և այդ դարաշրջանի նկատմամբ հեղինակի ցուցաբերած հետաքրքրությունը պատճառաբանված էին ինչպես գիտական, այնպես էլ քաղաքական շարժառիթներով։ Նախ, զեկուցողի կարծիքով պրոբլեմը նախահեղափոխական ժամանակաշրջանի վրաց պատմաբանների կողմից ուսումնասիրված էր անբավարար և ոչ պատշաճ մակարդակով, քանդի վերջիններիս պատկերացմամբ Վրաստանի պատմությունը սերտորեն շաղկապվում էր գերազանցապես վրացական թագավորության կամ պետականության գոյության հետ։ Նրանք, ինչպես գտնում էր Ֆ. Մախարաձեն, հիմնականում ուսումնասիրում էին այն պատմափուլերը, երբ վրաց ժողովուրդը դեռ պահպանում էր իր թագավորությունը և չէր զրկվել ազգային պետականությունից։ Վերջինիս կորստից հետո վրաց պատմաբանների մոտ օրինաչափորեն զգալի չափով նվազեց հետաքրքրությունը երկրի պատմության նկատմամբ։ Այդ պատճառով էլ վրաց խորհրդային պատմաբանը փորձելով լրացնել այդ բացը, իր ուշադրությունը սևեռեց պատմական այդ ժամանակաշրջանին, համոզված լինելով, որ «19-րդ դարի Վրաստանի պատմությունը ներկայացնում է շատ մեծ հետաքրքրություն»[5]։ Նման ուշադրությունը պայմանավորված էր նաև նրանով, որ հենց դարի սկզբին ավարտվեց Արևելյան Վրաստանի միացումը Ռուսաստանին, որը վրաց ժողովրդի պատմական ճակատագրում կարևոր քաղաքական նշանակություն ունեցավ։

Զեկուցողը միաժամանակ փորձում էր ընդհանուր գծերով ներկայացնել միացման պատմությունը, իմաստավորել դրա պատմական հետևանքները վրաց ժողովրդի քաղաքական կյանքում։ Նա նպատակադրվել էր նաև լուսաբանել վրացական հասարակության սոցիալական տարբեր խավերի վերաբերմունքն այդ կարևոր քաղաքական իրադարձության նկատմամբ։ Հարցադրումը, անշուշտ, ինչպես գիտական, այնպես էլ քաղաքական առումով չափազանց կարևոր էր, թեև հեղինակի առանձին պատասխաններն ու գնահատականները վիճելի են, անընդունելի և, թերևս, որոշ դեպքերում էլ պարզապես սխալ։ Ընդհանրացնելով ու հանրագումարի բերելով Վրաստանը Ռուսաստանին միացվելու դրական ու բացասական կողմերը, Ֆ. Մախարաձեն կատարեց 1920-ական թվականների խորհրդային պատմագիտության համար ուշագրավ եզրակացություններ։

Առաջին. XVIII դ. վերջին Ռուսաստանին ապավինելը Վրաստանի համար առավել ընդունելի էր ու նպատակահարմար։ Զեկուցողն իրավացիորեն գտնում էր, որ պարսկական կամ թուրքական կողմնորոշումը կործանարար կլիներ վրաց ժողովրդի համար։ Դա են ապացուցում պարսկա-թուրքական ճիրաններում գտնված շատ ճնշված ժողովուրդների՝ թերևս, առաջին հերթին հայերի ու վրացիների ողբերգական ճակատագրերը։ «Մենք գիտենք,— նշում էր վրաց պատմաբանը,— թե որքան ուրիշ ժողովուրդներ վերացվեցին, ընկնելով Թուրքիայի և Պարսկաստանի գիրկը։ Շատերին, հավանաբար, քաշ հայտնի է այնտեղ գաղթեցրած հարյուր հազարավոր վրացիների ճակատագիրը, և ի՞նչ ստացվեց դրանից»[6]։ Ահա ինչու այն ժամանակ ստեղծված դրությունից դուրս գալու ելքը նա տեսնում էր դեպի Ռուսաստան կողմնորոշվելու մեջ։ Երկրորդ. հեղինակը դա ընդունելի էր համարում, որովհետև Ռուսաստանին միացվելուց հետո Արևելյան Վրաստանում հատկապես 1850—1860-ական թվականներից սկսած ռուսական դեմոկրատական գրականությունը և առաջավոր հասարակությունը հսկայական ներգործություն ունեցան վրաց գրականության և հասարակական մտքի զարգացման վրա։ Իսկ 1870—1880-ական թվականներին վրաց առաջադեմ երիտասարդության վրա մեծ ազդեցություն գործեց նարոդնիկությունը։ Երրորդ. այդ կարևոր քաղաքական իրադարձությունից հետո ստեղծվեցին հեղափոխական շարժման ձևավորման ու

5 Նույն տեղում, էջ 484։
6 Նույն տեղում, էջ 500։

հետագա զարգացման բոլոր պայմանները, բանվոր դասակարգին նախապատրաստելով այն դերին, որ նա պետք է խաղար հետագայում։ Դրանով իսկ ի վերջո ռուսական ինքնակալության ռուսացման ու գաղութատիրական քաղաքականությունը Վրաստանում լիակատար կրախի մատնվեց։ Չորրորդ. ելնելով վերոհիշյալից, զեկուցողը մատնանշում էր, որ տվյալ կոնկրետ իրադրության մեջ դեպի Ռուսաստան կողմնորոշվելը համեմատաբար ավելի առաջադիմական երևույթ էր[7]։

Ֆ. Մախարաձեի զեկուցումն ուշագրավ էր նաև նրանով, որ այն ունկընդիրների ուշադրությունը հրավիրեց Վրաստանում ապրող տարբեր ազգությունների ներկայացուցիչների, հատկապես հայերի ու վրացիների փոխհարաբերություններին, որոնք XIX դ. վերջերին բավականին սրվեցին։ Վրաց պատմաբանը դա բացատրում էր նրանով, որ XIX դ. առաջին կեսին վրաց բուրժուազիայի զարգացման սաղմնային վիճակը, հայ առևտրավաշխառուական բուրժուազիայի անբաժան գերիշխանությունը, վրացական սնանկացած իշխանների ու ազնվականների կալվածքների անցումը նշված դասակարգի հայ ներկայացուցիչներին, դժգոհության պարարտ հող էին ստեղծում ոչ միայն նրանց, այլև անգամ ողջ հայության նկատմամբ։ Այդ հակամարտությանն «իր հերթին նպաստեց նաև անցյալ դարի երկրորդ կեսից սկսած վրացական բուրժուազիայի զարգացումը»[8]։ Այդ հարաբերություններն էլ ավելի սրվեցին XIX դ. վերջին կայացած «Թիֆլիսի քաղաքային դումայի ընտրությունների արդյունքների կապակցությամբ... Երբ իրավասուների հսկայական մեծամասնությունն ընտրվեց հայերից, ավելի ստույգ հայկական բուրժուազիայի ներկայացուցիչներից»։ Ֆ. Մախարաձեն եզրակացնում էր, որ այդ «խոշոր ազգայնական կոնֆլիկտը կանխվեց միայն մարքսիստների խմբի միջամտության շնորհիվ, որոնք բացահայտեցին ազնվականության մեքենայությունները»[9]։ Հեղափոխականների այդ ավագ սերունդը հաստատակամորեն, ոչ թե խոսքով, այլ գործով կանգնած էր պրոլետարական ինտերնացիոնալիզմի դիրքերում և անհողդողդ կենսագործում էր ժողովուրդների իսկական բարեկամության գիծը։

Ֆ. Մախարաձեի զեկուցման մեջ տեղ գտած նման ուշագրավ հարցադրումների պարագայում օրինաչափ էր, որ դրա շուրջ ծավալված բանավեճին Մ. Պոկրովսկու, Ա. Շեստակովի, Վ. Կարպիչի, Կ. Գատուևի հետ միասին մասնակցեցին խորհրդահայ պատմագիտական մտքի նշանավոր ներկայացուցիչներ Ա. Հովհաննիսյանը, Հ. Զորյանը և Ի. Կուսիկյանը։ Վաստակաշատ պատմաբան Ա. Հովհաննիսյանի տեսակետով Ֆ. Մախարաձեի զեկուցման մեջ նկատված թերությունները ու վիճելի հարցադրումները պայմանավորված էին ընդհանրապես Անդրկովկասի և մասնավորապես Վրաստանի տնտեսության պատմության պրոբլեմի անբավարար մշակմամբ, ինչն օբյեկտիվորեն լուրջ բարդություններ ու դժվարություններ էր առաջացնում հարցադրումների սպառիչ, գիտական մեկնաբանության համար։ «Իհարկե,— այս առթիվ նշեց Ա. Հովհաննիսյանը,— անհրաժեշտ էր Վրաստանի պատմությունն ավելի հստակ, ավելի ստուգիվ շաղկապել Անդրկովկասի... և ընդհանրապես Ռուսաստանի պատմության հետ»[10]։ Հայ պատմաբանի կարծիքով զեկուցման մյուս թերությունն այն էր, որ Ֆ. Մախարաձեն անդրադառնալով Վրաստանի պատմությանը, հավանաբար նկատի ուներ, միայն վրաց ժողովրդի տարեգրությունը։ Այդ պատճառով էլ նա միայն հպանցիկ հիշատակեց այնտեղ բնակվող ժողովուրդներին, և այն էլ ըստ էության սոսկ XIX դ. վերջի պատմության կապակցությամբ «մի քանի խոսք ասաց հայկական բուրժուազիայի մասին։ Մինչդեռ չի կարելի հասկանալ Վրաստանի պատմությունը... հաշվի չառնելով հայ

---

7 Նույն տեղում, էջ 492—493, 500։

8 Նույն տեղում, էջ 491։

9 Նույն տեղում։

10 Նույն տեղում, էջ 496։

առևտրական կապիտալի դերն Անդրկովկասում ընդհանրապես և Վրաստանում մասնավորապես»[11]։ Այս դիտողությունները, անշուշտ, ընդունելի են ու համապատասխանում են իսկությանը, սակայն չի կարելի համաձայնել տաղանդաշատ պատմաբանի հետ, որի կարծիքով «ոչ թե վրաց ժողովուրդն էր իր փրկությունը փնտրում ռուսական կողմնորոշման մեջ, այլ սնանկացած վրացական ֆեոդալները և Ռուսաստանի հետ տնտեսապես կապված կամ Ռուսաստանի կողմից Անդրկովկասը նվաճվելում տնտեսապես շահագրգռված նրանց պարտատերերը»[12]։ Ի դեպ, Ֆ. Մախարաձեն էլ հստակ չէր տեսնում ու լիովին գնահատում միացման պատմական նշանակությունը վրաց ժողովրդի համար, քանզի նրա պատկերացմամբ «Վրաստանի միացումն իր ողջ ծանրությամբ ընկնում էր գյուղացիության վրա»[13]։ Անշուշտ, վրաց գյուղացիությունը և աշխատավորությունն ընդհանրապես թեև ընկան ցարիզմի սոցիալական ու ազգային ճնշման տակ, այնուհանդերձ, անվիճելի է, որ միացումն անմիջապես բխում էր վրաց ժողովրդի շահերից։ Միացման մեջ դրական կողմերի անտեսման կամ թերագնահատման համար հիմք էր այն, որ խորհրդային պատմագիտությունն այդ տարիներին ելակետ ուներ և ղեկավարվում էր լայնորեն տարածված այսպես կոչված «բացարձակ չարիքի» կոնցեպցիայով։ Այն արտացոլում էր խորհրդային պատմագիտական մտքի զարգացման ժամանակի մակարդակը։ Վրաց պատմաբանը մատնանշելով որ միացումն իր ողջ ծանրությամբ, իրոք, ընկնում էր գյուղացիության վրա, հարկ էր համարում հիշատակել դարի առաջին կեսին ցարական տիրապետության դեմ տեղի ունեցած մի շարք ապստամբություններ՝ 1812 թ.՝ Կախեթիայում, 1819—1820 թթ.՝ Իմերեթիայում, 1856 թ.՝ Մենգրելիայում։ Անշուշտ, վրացական ֆեոդալների մի մասն ուներ ռուսական կողմնորոշում և ջատագովում էր միացումը, սակայն դրանց կողքին եղել են նաև հակառակորդներ, որի մասին է վկայում 1832 թ. տեղի ունեցած «միապետական, ազնվականական դավադրությունը, վերջին փորձը՝ վերականգնելու վրացական թագավորական դինաստիան... Դավադրությունը բացվեց և գործը լիկվիդացվեց»[14]։

Այս տեսակետից, իհարկե, թե գիտական և թե քաղաքական առումով ցանկալի կլիներ, եթե պատմաքաղաքական զուգահեռներ անցկացվեին Ռուսաստանի հետ Արևելյան Վրաստանի և Արևելյան Հայաստանի միացման վերաբերյալ, որովհետև այդ բախտակից ժողովուրդներն իրենց պատմական ճակատագրերում ունեին շատ ընդհանրություններ։ Մանավանդ, որ գիտաժողովի աշխատանքները համընկան հայ ժողովրդի կյանքում կարևորագույն նշանակություն ունեցող իրադարձության՝ Ռուսաստանի հետ միացման 100-ամյակի հետ։ Անհամոզիչ հնչեց ինչպես Ֆ. Մախարաձեի, այնպես էլ բանավեճի մասնակիցների համար ըստ էության ընդհանուր այն թեզը, որը ռուսական կողմնորոշումը գերազանցապես շաղկապում էր ֆեոդալիզմի ճգնաժամի հետ։ Ավելին, պատմաբան Կ. Գատուևի համոզմամբ Վրաստանի ռուսական կողմնորոշման մեջ ֆեոդալիզմի ճգնաժամը ձեռք էր բերում առանցքային նշանակություն։ Նրա կարծիքով այն «կենտրոնական էր» ու անկարելի էր «ժխտել»[15] այդ փաստը։ Սակայն ո՞չ Կ. Գատուևը և ոչ էլ այդ թեզի մյուս կողմնակիցները չնշեցին, թե ինչպես են պատկերացնում ֆեոդալիզմի ճգնաժամը, ինչ են հասկանում դրա ներքո, որը նրանց կարծիքով վրաց ֆեոդալներին հարկադրեց ապավինել Ռուսաստանին։ Հավանաբար, նրանք նկատի ունեին ֆեոդալական Վրաստանի քաղաքական անմխիթար, ծանր ճգնաժամային կացությունը, ինչն ակնհայտորեն երևաց Աղա-Մահմադ խանի արշավանքի ժամանակ, կամ էլ ֆեոդալական երկպառակությունները և սեփական ուժերով

11 Նույն տեղում։
12 Նույն տեղում։
13 Նույն տեղում, էջ 489։
14 Նույն տեղում, էջ 488։
15 Նույն տեղում, էջ 498։

անկախության պաշտպանության անկարողությունը, որոնք էլ վրաց ֆեոդալների մի զգալի մասին Գեորգի XII-ի գլխավորությամբ մղեցին դեպի Ռուսաստանը, քանզի նրանք դրա մեջ տեսան փրկության միակ ուղին։ Սակայն պատմագիտական առումով թերի է քաղաքական կողմնորոշումը պայմանավորել միայն ֆեոդալիզմի ճգնաժամով և միաժամանակ թերագնահատել, առավել ևս անտեսել, կամ էլ ածանցված դերում ներկայացնել քաղաքական, տնտեսական, ազգային-սոցիալական այլ, ընդ որում, անհամեմատ ավելի զորեղ գործոնները։ Հարցի սպառիչ գիտական պատասխանը պահանջում է պրոբլեմի մեկնության ժամանակ այդ ամենը քննել դիալեկտիկական միասնության մեջ, որպես պատմական իրադարձության ամբողջության առանձին բաղադրամասեր։ Այս հարցում հատկապես անընդունելի էր Մ. Պոկրովսկու ելույթում տրված գնահատականը, որը Արևելյան Վրաստանի (տրամաբանորեն նաև Արևելյան Հայաստանի) Ռուսաստանի կազմի մեջ մտնելը ներկայացնում էր որպես սոսկ անեքսիա, նվաճում, ագրեսիա, առանց որևէ օբյեկտիվորեն դրական միտումների առկայության։ Մ. Պոկրովսկին խորհրդային պատմագիտական մտքի խոշոր ներկայացուցիչն էր, որի հայացքներն անմիջապես պարարտ հող էին գտնում ազգային հանրապետությունների պատմաբանների շրջանում, նրանց համար դառնալով պատմագիտական յուրատեսակ ուղեցույց։ Մ. Պոկրովսկու կարծիքով վրաց պատմաբանը չափազանց մեղմ և գունազարդված ձևով ներկայացրեց Արևելյան Վրաստանի անեքսիան Ռուսաստանի կողմից։ Ըստ նրա, Ֆ. Մախարաձեի զեկուցումից ստեղծվել էր այնպիսի տպավորություն, թե իբր Արևելյան Վրաստանը կամավոր միացավ Ռուսաստանին[16]։ Ի դեպ, հետագա ուսումնասիրություններում հիմնավորվեցին, որ այդ միացումը կամավոր էր, համենայնդեպս այդպիսին է ներկայիս խորհրդային պատմագիտության տեսակետը։ Մ. Պոկրովսկին թեև հիմնականում ճիշտ էր մեկնաբանում Ռուսաստանի արտաքին քաղաքականության հեռամետ նպատակները Մերձավոր արևելքում ու Անդրկովկասում, իսկ Վրաստանի՝ ստրատեգիական այդ կարևորագույն ռազմաքաղաքական ռեգիոնի միացման մեջ տեսնում Կ. Պոլսում ու նեղուցներում, ցարիզմի դիրքերը ամրապնդելու ռեալ ուղի, այսուհանդերձ, պատմական հեռանկարների տեսանկյունից թերի ու բացասական էր պատկերացնում այդ քաղաքական ակտը վրաց ժողովրդի կյանքում։ Զարգացնելով Վրաստանի նվաճման, անեքսիայի մասին թեզը և պնդելով, թե դա սոսկ ագրեսիվ քաղաքականության արդյունք էր, Մ. Պոկրովսկին եզրակացնում էր. «Անցյալում մենք՝ ռուսներս, ես ամենազտարյուն վելիկոռուս եմ, որպիսին միայն կարող է լինել ... մեծագույն կողոպտիչներ էինք, որպիսին կարող ենք պատկերացնել»[17]։ Մ. Պոկրովսկին ուղղակիորեն զարգացնում է Վրաստանի սոսկ անեքսիայի, նվաճման մասին թեզը և միացումը դիտարկում որպես ռուսաց պետության միայն ագրեսիվ քաղաքականության արդյունք։ Նրա բերած մի օրինակը վերաբերում է Մ. Լերմոնտովի «Մծիրի» ստեղծագործությանը, որը ռուս գրականության մեծ ներկայացուցիչը «սկսում է վանքի նկարագրությունից և վրաց թագավորի գերեզմանի պատկերումով, որի վրա գրված է. «Այսինչ մի թագավոր այնինչ տարում Ռուսաստանին մատնեց իր ժողովրդին»։ Այսպիսով,— կրկին եզրակացնում էր Մ. Պոկրովսկին,— ռուս լիբերալ սպայությունը, որին դասվում էր Լերմոնտովը, դա դիտում էր որպես անեքսիա, որպես նվաճում, իսկ այդ ակտը ստորագրած վրաց թագավորին դիտում որպես դավաճան»[18]։ Սակայն ցարիզմի սոցիալական և ազգային ճնշման դեմ պայքարը չէր կարող այդ միացման դրական կողմերն անտեսելու հիմնական պատմական փաստարկ դառնալ, մանավանդ որ իրենք՝ դեկաբրիստները, նույնպես անհաշտ գոտեմարտի էին ելել ինքնակալության և ճորտատիրության դեմ, դեկաբրիստներ-

16 Նույն տեղում, էջ 493։

17 Նույն տեղում, էջ 494—495։

18 Նույն տեղում, էջ 493։

որոնց, բնականաբար, հրապուրում էին ցարիզմի դեմ ուղղված ու մղված պայքարի բոլոր ձևերը։ Բացի այդ, Մ. Պոկրովսկին կամ տեղյակ չէր (որը քիչ հավանական է), կամ էլ պարզապես թերագնահատում էր (ինչն ավելի հավանական է) դեկաբրիստների ու նրանց մտքերը և հույզերը կիսող Ա. Գրիբոյեդովի գնահատականներն Անդրկովկասի՝ գերազանցապես Արևելյան Վրաստանի և Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացվելու դրական նշանակության մասին, ինչպես երկու քրիստոնյա բախտակից ժողովուրդների, այնպես էլ ռուսաց պետության համար, նրա հարավային սահմանները ամրապնդելու, այնտեղ աշխատավոր և ձեռներեց, հավատարիմ ու դաշնակից ազգերով բնակեցված լինելու առումով։

Գիտաժողովում քննվեցին նաև Միջին Ասիայում կապիտալիզմի զարգացման նշանակության, ցարիզմի դեմ ազգային-հեղափոխական շարժման պարբերացման, Ռուսաստանին միացվելու պատմության հետ առնչվող կարևոր պրոբլեմներ։ Դրան էր մասնավորապես նվիրված Պ. Գալուզոյի «Ազգային-ազատագրական շարժման պատմության պարբերացումը Միջին Ասիայում» զեկուցումը, որի մեջ տեղ էին գտել ինչպես ճիշտ, այնպես էլ սխալ գնահատականներ, որոնք նույնպես պայմանավորված էին ժամանակի պատմագիտական մտքի զարգացման մակարդակով։ Պ. Գալուզոն չէր կասկածում, որ Միջին Ասիայում ռուսական գերիշխանությունը կապիտալիզմի զարգացման ուժեղ ազդակ էր։ Դրա լավագույն վկայությունն է երկու երկաթուղիների կառուցումը, Միջին Ասիայում ձևավորված պրոլետարիատի հեղափոխական ջոկատի առկայությունը, այն ուժի, որը ռուսական ինքնակալությանը և ռուսական բուրժուազիային դիմակայեց[19]։ Նշելով այսօրինակ փաստեր, զեկուցողը կարծես թե փորձում էր կապիտալիզմի զարգացման տեսանկյունից Միջին Ասիայի Ռուսաստանին միացնելու մեջ տեսնել դրական գծեր։ Բայց դա այդպես չէ, քանզի հեղինակը միաժամանակ արձանագրում էր, թե Միջին Ասիայում իսկապես առկա էր «բոլոր մահմեդականների համազգային պայքարն այլադավանների տվյալ դեպքում ռուսների դեմ»[20]։ Պ. Գալուզոն ուշադրությունը սևեռում էր տիրապետող դասակարգի տարբեր խմբավորումների դիրքորոշմանը, ինչն անշուշտ կարևոր է Միջին Ասիայի Ռուսաստանին միացնելու գնահատականը ճիշտ մեկնաբանելու համար, մանավանդ որ գիտաժողովում այս հարցում միանշանակ տեսակետ չկար։ Այսպես, Պ. Գալուզոյի կարծիքով եթե Կոկանդի ու Բուխարայի խանությունների վերնախավն իր վարչաձևը և արտոնությունները պահպանելու նպատակով շահագրգռված էր խաղաղ ենթարկվելու և հնազանդվելու ռուսական տիրապետությանը, ապա բանավեճին մասնակցած Գուբայդուլինի տեսակետով սխալ է ենթադրել, թե ֆեոդալական արիստոկրատիան կամավոր արտահայտվեց ռուսների օգտին։ «Դա ճիշտ չէ... Մենք գիտենք, որ եթե այս կամ այն խանը կամ էմիրը համաձայնության մեջ էին մտնում ռուսների հետ, ապա դա գլխավորապես կատարվում էր քսան հազարանոց ռուսաց զորքի ճնշման ներքո, երբ Բուխարայի խանի սեփական հիսուն հազարանոց բանակը փախուստի դիմեց արագաձիգ թնդանոթների կրակոցների ներքո»[21]։ Զափազանց հետաքրքիր է ու արժեքավոր Գուբայդուլինի առաջ քաշած միտքը, որի համաձայն չի կարելի պնդել, թե «բոլոր գյուղացիները հանդես էին գալիս ռուսաստանյան իշխանությունների դեմ... Գյուղացիները նախկին «ազգային» իշխանության համեմատությամբ ռուսաստանյանը համարում էին ոչ ավելի վատ։ Ռուսաստանյան կապիտալիստական... իշխանության հաստատմամբ տեղական գյուղացիության դրությունը սկզբում չվատացավ... համենայնդեպս անողոք շահագործումը ֆեոդալների կողմից դադարեցվեց»[22]։

---

19 Նույն տեղում, էջ 522—525։

20 Նույն տեղում, էջ 522։

21 Նույն տեղում, էջ 535։

22 Նույն տեղում, էջ 536։

Եվ ճիշտ այդպես չէր կարող Ռուսաստանի կողմը լինել ամբողջ բուրժուազիան, որովհետև երբ գոյություն ունեին Բուխարայի, Խիվայի և Կոկանդի ինքնուրույն վարչաքաղաքական միավորները, ապա այստեղ մեծ նշանակություն ուներ սահմանների, մաքսերի մի միավորից մյուսը անցնելու հարցը։ Այդ հարցը տեղիք էր տալիս «զանգվածային սպանություններ, որոնք հանգեցնում էին նրան, որ... գանձերից պատրաստում էին մինարեթներ։ Բայց երբ եկավ ռուսաստանյան իշխանությունը,— եզրակացնում էր Գուբայդուլինը,— ապա այդ դրությունը կտրուկ փոխվեց։ Ինքնին հասկանալի է, որ ռուսաստանյան այդ իշխանության նկատմամբ տարբեր դասակարգերի վերաբերմունքը տարբեր էր...»[23]։ Այդ է վկայում և հավաստում Կ. Վասիլևսկին, որի համոզմամբ ռուսական առևտրական բուրժուազիայի հետ կապված տոհմական արիստոկրատիան, անկասկած, կողմնակից էր ռուսների գալստյանը, հենց նա էլ ստեղծեց ռուսների կողմնակիցների խումբ և ընդհակառակը, վերնախավի մյուս թևը դեհկանության հետ միասին ակտիվորեն հանդես եկավ նրանց դեմ։ Միջտոհմային և ազգամիջյան պայքարը, ճիշտ եզրակացնում էր զեկուցողը, զգալիորեն նպաստեց ռուսների հեշտ հաղթանակին։ Ինչ վերաբերում է ճնշված, հարստահարված, խավարամոլության մեջ տառապող դեհկանության հիմնական զանգվածին, ապա նա չափազանց անտարբեր էր երկրամասում ռուսների երևան գալու նկատմամբ։ Այս առումով չի կարելի անտեսել կրոնական տարբերությունները, որոնք նույնպես լրջորեն խոչընդոտում էին Ռուսաստանի առաջխաղացմանը Միջին Ասիա և այնտեղ ստեղծում շոշափելի ընդդիմադիր ուժեր։ Պ. Գալուզոն, օրինակ, Միջին Ասիայում ծագած և տեղի ունեցած բոլոր տեսակի սոցիալական ելույթների ու ապստամբությունների մեջ տեսնում էր հեղափոխություն, այսինքն տալիս էր պրոբլեմի չափազանց պարզունակ, թերևս գռեհիկ մեկնություն, փաստորեն չըմբռնելով, որ հեղափոխությունը բովանդակում է դասակարգային և սոցիալ-քաղաքական ավելի խոր գործոններ։ Այստեղ ևս, անշուշտ, զգացվում էր Մ. Պոկրովսկու հայացքների ազդեցությունը, որն իր հերթին նույնպես Ռուսաստանի պատմության մեջ եղած գրեթե բոլոր սոցիալական շարժումներում տեսնում էր հեղափոխություն և անգամ ղազավաթը համարում առաջադիմական շարժում։ Այդպիսի մոտեցում էր ցուցաբերում նաև Պ. Գալուզոն, դրա մեջ տեսնելով ռուսների դեմ պայքարի միջոց։ Նրա կարծիքով ազգային-հեղափոխական պայքարի այդ փուլում ղազավաթն «իսկական հեղափոխական լոզունգ էր»[24], որը միայն պրոլետարիատի ձևավորման ու նրա պայքարի շրջանում է վերածվում հակահեղափոխական, ավելի ու ավելի հետադիմական լոզունգի, քանզի անցնելով տեղական տիրապետող դասակարգի ձեռքը, դառնում էր նրա գաղափարախոսությունը։ Անշուշտ, ինչպես Մ. Պոկրովսկին, այնպես էլ Պ. Գալուզոն ակամա սքողում էին ղազավաթի՝ այդ հետադիմական, խավարամիտ, այլակրոնություն չհանդուրժող ուսմունքի էությունը, և չգիտես ինչու դրա մեջ փորձում տեսնել առաջադիմական, առավել ևս հեղափոխական գծեր։ Իրականում այն պատմական ոչ մի շրջափուլում այդպիսին չի եղել և չէր էլ կարող լինել, քանի որ ներծծված էր կրոնական անտագոնիզմով։ Եվ քանիցս իրավացի էր Ֆ. Մախարաձեն, երբ նման լուրջ, սկզբունքային սխալի համար խստագույնս դատապարտեց Պ. Գալուզոյին։ «Դուք,— նշեց վրաց պատմաբանը,— ղազավաթն անվանում եք իսկական հեղափոխական լոզունգ։ Դա արդեն բոլորովին պետք չէ։ Դա իսկական հետադիմություն է, որպիսին միայն հնարավոր է։ Ոչ մի ձևով մենք չենք կարող ղազավաթն անվանել հեղափոխական լոզունգ... Ես երբևէ չեմ համարել և չէի կարող համարել, թե ղազավաթը հանդիսանում է հեղափոխական լոզունգ»[25]։ Հատկանշական է, որ Ֆ. Մախարաձեի այս տեսակետը բաժանեց Միջին Ասիան ներկայացնող

23 Նույն տեղում։

24 Նույն տեղում, էջ 523։

25 Նույն տեղում, էջ 540։

պատմաբաններից Զ. Գիմադիևը, որի կարծիքով ղազավաթը երբեք չի եղել ժողովրդական շարժման լոզունգ, դա եղել է զուտ կրոնական, հետադիմական լոզունգ[26]։

Վրաց պատմաբանը որոշ նմանություններ էր տեսնում Վրաստանի և Միջին Ասիայի Ռուսաստանին միացվելու միջև, մատնանշելով, թե «ի վերջո նրանք (Կոկանդը, Բուխարան, Խիվան—Մ. Մ.) կարող էին ընկնել կա՛մ ռուսական կա՛մ անգլիական, ֆրանսիական ազդեցության ներքո։ Այդ երկու հեռանկարներից ո՞րն էր ավելի շահավետ այդ երկրի տեսանկյունից... Ահա այդպես է պետք դնել հարցը...»[27]։ Սակայն նա չտվեց հարցի հստակ պատասխանը, որի մասին կարող ենք միայն կռահել, ելնելով Արևելյան Վրաստանը Ռուսաստանին միացվելու վերաբերյալ նրա տված գնահատականից, թեև Ֆ. Մախարաձեի պատկերացմամբ—, «երբ ռուսական կապիտալիզմն առաջ էր շարժվում Միջին Ասիա, ապա դա առավել հեղափոխական էր այն ամենից, ինչ կարելի էր այն ժամանակ կատարել Թուրքեստանում»[28]։ Այս տեսակետը կիսեց Կ. Վասիլևսկին, որի համոզմամբ «Թուրքեստանն անխուսափելիորեն պետք է ընկներ Ռուսաստանի կամ Անգլիայի գաղութային հեգեմոնիայի ներքո»[29]։ Իհարկե, չափազանցություն է ռուսական կապիտալիզմի զարգացման մեջ տեսնել ու փնտրել հեղափոխական գծեր. պարզապես այն իր ոլորտի մեջ էր առնում Միջին Ասիան և օբյեկտիվորեն խաղում առաջադիմական դեր։

Պրոբլեմի վերջնական եզրահանգման համար ուշագրավ են Միջին Ասիա թափանցելու և այնտեղ ռուսական տիրապետություն հաստատելու, կապիտալիզմի առաջադիմության և հետադիմության վերաբերյալ եղած տեսակետները, որոնց հիմնավորմամբ հանդես եկան մի շարք պատմաբաններ։ Նրանցից մեկի՝ Միջին Ասիայի ներկայացուցիչներից Կ. Գիյասովի համաձայն Պ. Գալուզոյի զեկուցման արժեքն այն էր, որ այնտեղ Միջին Ասիայում ռուսական գերիշխանության առաջադիմության և հետադիմության մասին հարցը «ճշտված է և դրված դիալեկտիկորեն։ ... Ես կարծում եմ, որ ընկ. Գալուզոն տվել է այդ հարցի ճիշտ լուծումը։ Նա (Գալուզոն—Մ. Մ.) մատնանշում է Միջին Ասիայում ռուսական կապիտալիզմի և առաջադիմությունը և հետադիմությունը»[30],— ասաց Կ. Գիյասովը։ Իսկ Կ. Վասիլևսկու կարծիքով, ռուսների Միջին Ասիա գալու առթիվ հետադիմության և առաջադիմության վերաբերյալ հարցը «պատմության կողմից լուծվել է դրականորեն»[31]։ Քանի դեռ ռուսական կապիտալիզմը փշրում էր ֆեոդալիզմի հիմքերը, նրա տնտեսությունը և հաստատում ապրանքադրամական ու կապիտալիստական հարաբերություններ, անկասկած, օբյեկտիվորեն խաղում էր առաջադիմական դեր։ Միայն ավելի ուշ, երբ ռուսական կապիտալիզմը սկսեց ճնշել զարգացող տեղական ազգային բուրժուազիային և բլոկի մեջ մտավ հետադեմ ուժերի հետ, նա դարձավ հետադիմական[32]։ Իր եզրափակիչ խոսքում Պ. Գալուզոն արձանագրեց. «Եթե ընդունվի, որ ռուսական նվաճումը Միջին Ասիայում սերմանեց առաջադիմություն, ապա դա ի՞նչ է նշանակում։ Դա նշանակում է, որ ռուսական նվաճումների ժամանակաշրջանը, Չերնիշևսկու և Գերցենի դարաշրջանը եղել է մի փուլ, երբ յուրաքանչյուր հեղափոխական պետք է ասեր. «Ռուսաստան, շարժվիր Միջին Ասիա»։ Կարո՞ղ էր այն ժամանակ այդպես ասել հեղափոխականը թե ոչ... Միանգամայն հասկանալի է, որ ես լռության չեմ մատնում Միջին Ասիա ռուսական առաջշարժման հարաբերական առաջադի-

26 Նույն տեղում, էջ 549։
27 Նույն տեղում, էջ 538։
28 Նույն տեղում, էջ 539։
29 Նույն տեղում, էջ 548։
30 Նույն տեղում, էջ 551։
31 Նույն տեղում, էջ 546։
32 Նույն տեղում, էջ 537։

մության մասին հարցը։ Ես հենվում եմ «համեմատաբար» բառի վրա»[33]։ Այսպիսով, դեռևս չկային հարցի հստակ սպառիչ մարքսիստական պատասխան, պատմաբանների համար անվիճելի ու լիովին ընդունելի գնահատականներ։ Կապիտալիզմի հետադիմության և առաջադիմության մասին թեզը, որը դիտարկվեց որպես դիալեկտիկական մոտեցում, անընդունելի է, քանզի բուրժուական հարաբերությունների զարգացումն ուներ միանշանակ գնահատական՝ միայն և միայն առաջադիմական նշանակություն։ Հանրահայտ է Վ. Ի. Լենինի այն դրույթը, որի համաձայն Ռուսաստանը տուժում էր ոչ այնքան կապիտալիզմի, որքան նրա ոչ բավարար զարգացումից։ Իսկ եթե նկատի ունենանք Ռուսաստանի և Միջին Ասիայի զարգացման աստիճանը և մակարդակը, ապա պարզ կդառնա որ լենինյան այս միտքն ավելի շատ պետք է տարածել Միջին Ասիայի վրա։ Անշուշտ, ցարիզմը վարում էր Միջին Ասիան նվաճելու քաղաքականություն և, բնականաբար, ոչ մի հեղափոխական, դեմոկրատական գործիչ չէր կարող ռուսական բանակին կոչ անել շարժվել ու գրավել Միջին Ասիան։ Կապիտալիզմի զարգացման առաջադիմական նշանակությունն օբյեկտիվ էր, անկախ ցարիզմի կենսագործած քաղաքականությունից։

Հանրագումարի բերելով գիտաժողովի արդյունքները, վերստին հարկ է մատնանշել հարցադրումների ու գիտական պատասխանների կարևորությունը, քանզի դրանք վճռորոշ նշանակություն ունեցան հաջորդ սերնդի պատմաբանների համար, որոնք հենվելով նախորդների նվաճումների վրա ճշտեցին և լուսաբանեցին շատ պրոբլեմներ ու դրանով իսկ առաջ մղեցին մարքսիստական պատմագիտական միտքը, այն բարձրացրին որակական նոր աստիճանի։

ВАЖНЕЙШИЙ ЭТАП РАЗВИТИЯ СОВЕТСКОЙ ИСТОРИЧЕСКОЙ МЫСЛИ

(конференция историков СССР, состоявшаяся 28 декабря 1928—4 января 1929 гг.)

М. А. МУРАДЯН

Резюме

В становлении и развитии советской исторической мысли определяющее место отводится первой всесоюзной конференции историков-марксистов, в которой приняли активное участие представители почти всех советских республик. Важность конференции заключается в том, что она не только отметила необходимость углубленного научного изучения истории народов, населяющих и проживающих на территории бывшей Российской империи, но и сделала первые практические шаги в этом направлении. Общеизвестно, что многие народы либо вошли в состав России, либо в результате длительных и кровопролитных войн были присоединены к ней. В этой связи данная проблема имеет не только научно-познавательное, но и политическое, практическое значение, особенно в период перестройки, демократизации, гласности, когда рушатся прежние стереотипы, когда партия готовится к предстоящему пленуму ЦК КПСС по межнациональным отношениям.

33 Նույն տեղում, էջ 533։